

Ս. ՓՐԿԻԶ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ



ARMENIAN CHURCH OF OUR SAVIOUR

87 SALISBURY STREET

WORCESTER 9, MASS.

DIAL PL 6-2931

Փետրուար 5, 1963

Գերաշնորհ

Տ. Սիրոն Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
նիւ Եորթ

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Այսու կուգանք յայտնել Ձերդ Սրբազնութեան թէ եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ Հինգշաբթի, Յունուար 24-ին, իսկ Մխական Խորհուրդի եւ Վերստուգիչ Յանձնախումբի անդամներուն ընտրութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, Փետրուար 3-ին:

Օրինաւոր քուէարկութեամբ Մխական Խորհուրդի անդամ ընտրուեցան Տիարք Ճան Թօրոմանեան, Ջարլի Կարապետեան, Ջաւէն Գասպարեան, Ասպետ Ջաքարեան եւ Ղեւոնդ Յակոբեան: Ներկակ կը գտնէք երկպատիկ ցանկը ընտրելիներու ստացած քուէով:

Մաղթելով Ձերդ Սրբազնութեան աստուածահաճոյ գործերուն յաջողութիւն ի Տեառնէ,

Մատչիմք ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն

Որդիական սիրով

Ի դիմաց Մխական ժողովի

Էդիտ Հր. Քչեղեան

Եղիշէ Վարդապետ Կիւրեան
Նախագահ

Մ. Սիրոն Արքեպիսկոպոս
Տիկին Սիրվարդ Բարեջանեան
Ատենադպիր

Bartev Dav Bagdasarian
Պարթեւ Տէր Պաղտասարեան
Ատենապետ